«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

**«Նախագծային ուսուցման դերը սովորողների նախաձեռնողականության և սովորելու կարողունակության զարգացման գործում»**

Հետազոտող ուսուցիչ՝ Ալինա Խաչատրյան

Արմավիրի մարզի Նոր Արտագերսի միջն. դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան

ԱՐՄԱՎԻՐ 2022

## Բովանդակություն

Նախաբան ----------3

Գրականության ակնարկ ----------5

Գործնական համատեքստ ----------8

Եզրակացություն ----------15

Օգտագործված գրականության ցանկ ----------16

## Նախաբան

Սովորողների նախաձեռնողականության, ակտիվության, ինչպես նաև սովորելու ցանկության և ընդունակությունների զարգացման համար հիմք է նախապատրաստվում դեռևս առաջին ուսումնական շաբաթների ընթացքում: Սա է պատճառը, որ աշակերտների՝ սովորելու կարողունակության խնդիրների ուսումնասիրությունը կարևոր տեղ է զբաղեցնում ժամանակակից դպրոցի առանցքային խնդիրների շարքում: Այս համատեքստում կարևոր է նշել, որ աշակերտների ակտիվության ցուցանիշների բարձրացմանը նպաստում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշակերտների պատրաստվածությունը դպրոց հաճախելուն և նրանց ադապտացման շրջանի հաջող ընթացքը սկզբնաշրջանում: Երեխայի պատրաստվածությունը դպրոցին, իր հերթին, բնութագրվում է անձի ընդհանուր զարգացվածությամբ՝ ինտելեկտուալ, մոտիվացիոն, հաղորդակցական և ֆիզիկական առումներով:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ աշակերտների՝ նախաձեռենողականության և սովորելու ընդունակության խնդիրը այսօրվա դրությամբ հանդիսանում է բավականին բարդ խնդիր, որն ունի ոչ միայն մանկավարժական հիմքեր, այլև խորը հոգեբանական: Այն կախված է բազմաթիվ գործոններից, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, երբ խոսքը գնում է աշակերտի նախաձեռնողականության գնահատման մասին:

Այս պայմաններում մանկավարժի առջև դրված է կարևոր խնդիր՝ նպաստելու աշակերտների ակտիվության և նախաձեռնողականության բարձրացմանը և դրան նպաստող գործոնների ակտիվացմանը ուսումնական գործընթացում:

Տվյալ հետազոտական աշխատանքի նպատակն է նպաստել աշակերտների ակտիվության և նախաձեռնողականության բարձրացմանը և գրանցել այն հանգամանքները, որոնք նպաստում են դրան: Այդ համատեքստում փորձ է կատարվել վեր հանել առանցքային խնդիրներ, որոնք անմիջականորեն նպաստում են աշակերտների ակտիվության և նախաձեռնողականության ցուցանիշների

բարձրացմանը, կիրառելով տարբեր մանկավարժական մեթոդներ և մոտեցումներ: Մասնավորապես, առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Առանձնացնել ակտիվության և նախաձեռնողականության բարձրացմանը նպաստող գործոններ;
- Առանձնացնել ակտիվության և նախաձեռնողականության գրանցման հիմնական եղանակները;
- Նախագծային մանկավարժական մեթոդի կիրառմամբ ստեղծել իրավիճակներ՝ նպաստելու համար աշակերտների ակտիվության և նախաձեռնողականության բարձրացմանը;
- Առանձնացնել այն գործոնները, որոնք ազդում են աշակրտի ակտիվության և նախաձեռնողականության վրա (այդ թվում ուշադրության պակաս, ներգրավվածության պակաս, համագործակցության պակաս, ստեղծագործական մտքի և մոտեցման պակաս և այլն):

Նշենք, որ դպրոցական ծրագրերը, որպես կանոն, կազմվում են միջին առաջադիմությամբ և սովորելու ընդունակություններով օժտված աշակերտների համար: Սակայն, ցանկացած դասարանում հանդիպում են երեխաներ, ում սովորելու կարողությունների մակարդակը կամ ստանդարտից բարձր է, կամ ցածր: Այսինքն, երեխաները մշտապես տարբերվում են իրենց պատրաստվածության մակարդակով, մտավոր ունակություններով, ուսումնական ընդունակություններով և մի շարք այլ գործոններով, ինչով էլ պայմանավորվում է մեկ դասարանում տարբեր ակտիվությամբ և նախաձեռնողականությամբ երեխաների մշտական առկայությունը: Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, որպես կանոն, ակտիվ են դասերին, ձգտում են արդյունավետ կերպով գիտելիքներ ստանալ, չեն խուսափում դժվարություններից:

Այսպիսով, կարծում եմ, այս հետազոտական աշխատանքի թեման բավականին արդիական է, քանի որ աշակերտների ակտիվությունը և նախաձեռնողականությունը ձևավորող և դրանց վրա ազդեցություն թողնող գործոնների ուսումնասիրության խնդիրը մեծ արժեք է ներկայացնում մանկավարժական փորձի և պրակտիկայի համար:

## Գրականության ակնարկ

«Նախաձեռնողականությունն է այն շարժիչ ուժը, որն առաջ է մղում ամեն մի նոր միտք դեպի իրականություն: Այն հանգեցնում է դրական տեղաշարժի՝ երկրագնդի անդադար շարժին զուգահեռ: Նախաձեռնողականության առկայությունը զգում ենք մեր գրեթե ամեն քայլում» [Ուսուցման որակի բարելավմանն ուղղված մասնագիտական զարգացման գործիք տարրական դասարանների մասնագետների համար: Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան 2014, էջ 25]:

Դպրոցում սովորող աշակերտների նախաձեռնողականությունը և սովորելու կարողունակությունը զարգցնելու և խթանելու համար, բացի ավանդական մանկավարժական մեթոդներից, այսօրվա դրությամբ կիրառվում են նաև նորագույն, ժամանակակից մեթոդներ, որոնք թույլ են տալիս առավել արդյունավետ դարձնել ուսումնական գործընթացը: Այդպիսի մեթոդներից մեկն է նախագծային մեթոդը:

«Նախագծային ուսուցման մեթոդը ուսումնա-ճանաչողական և համատեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավված են դասավանդողներն ու ուսումնառուները: Ուսումնական նախագծերը նպաստավոր պայմաններ են ստեղծում սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու համար» [Սամվելյան Կ., Նախագծային մեթոդը՝ սովորողների ակտիվ մասնակցություն պահանջող ւսումնական մեթոդ: Երևան, Մանկավարժություն, 2013, էջ 16]:

Նախագծային մեթոդն ադապտիվ է. կարող է հարմարեցվել տարբեր միջավայրերի և նպատակների: Այն առավել արդյունավետ է, երբ դուրս է գալիս «դասարանային» և դպրոցական մակարդակից և գնում է դեպի համայնք:

Փոփոխվող աշխարհի և ինֆորմացիոն մեծ հոսքի պայմաններում դա մեծ մարտահրավեր է ժամանակակից ուսուցչի համար, որից լուրջ պատրաստվածություն և աշխատանքի կարևորության գիտակցություն է պահաջվում:

«Նախագծային մեթոդը խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու մեթոդ է, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ

այն ձևով» [Գալոյան Ս., Նոր դիդակտիկայի տեսական հիմքերը: Երևան, Մանկավարժություն, 2012, էջ 36]:

Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:

Նախագծային մեթոդը հանդիսանում է հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

«Նախագծային ուսուցումը դասավանդողի/դասավանդողների և սովորողի/սովորողների համատեղ կրթական գործունեությունն է, որը նպատակաուղղված է որևէ հիմնախնդրի/հիմնախնդիրների տեսական և/կամ գործնական լուծմանը» [Попов В.А. История педагогики и образования. - М.: Академия, 2010, էջ 68]:

Նախագծային ուսուցման հիմնական նպատակներն են՝

1. Նպաստել յուրաքանչյուր մասնակցի ինքնագնահատականի բարձրացմանը՝

1.1. Հնարավորություն ստեղծել, որ յուրաքանչյուրն իրեն տեսնի որպես ընդունակ և իրազեկ անհատականություն:

1.2. Մասնակցի մոտ զարգացնել իր և մյուսների դրական կերպարը:

1.3. Սովորողի մոտ ձևավորել իրեն և մյուսներին ստույգորեն գնահատելու հմտություն:

2. Ոգեշնչել սովորողներին՝ զարգացնելու կարողությունների «Համագործակցություն» համակարգը:

3. Ապահովել սովորողի քննադատական մտածողության զարգացման մեխանիզմը, դրված խնդիրը լուծելու ուղիների որոնման հմտության ձևավորումը:

4. Զարգացնել սովորողների հետազոտական կարողությունները (բացահայտել հիմնախնդիրը, հավաքել անհրաժեշտ տեղեկություններ, դիտարկել գործընթացները, ձևակերպել վարկածներ, ընդհանրացնել և այլն) և վերլուծական մտածողությունը:

Իրականացվող նախագծերն ունեն հետևյալ տիպաբանական հատկանիշները՝

- ըստ սովորողների գերակշռող գործունեության (առարկայորեն կողմնորոշված, հետազոտական, ստեղծագործական, տեղեկատվական, դերային),
- ըստ բովանդակության (միջառարկայական և մոնոնախագծեր),
- ըստ հարաբերությունների բնույթի (ներդասարանային, միջդասարանային, տարածաշրջանային, համապետական, միջազգային),
- ըստ տևողության (մինինախագծեր՝ մինչև մեկ շաբաթ, կարճաժամկետ՝ մինչև մեկ ամիս, միջնաժամկետ՝ մինչև վեց ամիս, երկարաժամկետ՝ կես տարուց ավելի),
- ըստ մասնակիցների թվի (անհատական, խմբային, միջխմբային):

Նախագծային ուսուցում կազմակերպելիս հարկ է ապահովել նախագծի իրականացման փուլերի ճիշտ հերթագայությունը և նրանց հատկացվելիք ժամանակի իրատեսական համամասնությունը:

Նախագծային աշխատանքի փուլերն են՝

1. Նպատակադրում;
2. Գործունեության տարբերակների քննարկում, միջոցների և եղանակների ընտրություն;
3. Պարտականությունների բաշխում;
4. Հետազոտական գործունեություն;
5. Արդյունքների ընդհանրացում և եզրակացություններ;
6. Հաջողությունների և սխալների վերլուծություն;
7. Շտկողական գործունեություն:

## Գործնական համատեքստ

Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում առաջադրված հարցի շուրջ իրականացվել է բնական հետազոտություն, այսինքն փորձարկումն ընթացել է մանկավարժական բնականոն գործընթացի սահմաններում:

Որպես հետազոտության մեթոդ ընտրվել է դիտարկման մեթոդը, որը թույլ է տալիս նպատակաուղված և կազմակերպված կերպով ընկալել և գրանցել հետազոտվող օբյեկտի վարքը համապատասխան պայմաններում: Այս մեթոդը շատ արդյունավետ է, գրեթե անփոխարինելի այն դեպքերում, երբ հետազոտության օբյեկտը ուսումնասիրվում է իր բնական, անիջական միջավայրի մեջ՝ առանց խախտելու նրա ամբողջականությունը:

Հետազոտության օբյեկտն է հանդիսանում մեկ դասարանում սովորող աշակերտների ամբողջականությունը:

ՈՒսուցիչը ամբողջությամբ ներգրավված է եղել հետազոտության ընթացքին և հանդիսացել է անցկացված հետազոտական միջոցառումների անմիջական կազմակերպիչը և իրագործողը, ուստի հետազոտության ընթացքում իրականացված դիտարկման մեջ ուսուցիչը ամբողջովին ներգրավված դերակատարություն ունի:

Հետազոտության ընթացքում իրականացվել է ամբողջական դիտարկում, որն ուղղված է եղել դասարանում սովորող աշակերտնրի վարքի ուսումնասիրմանը՝ դասապրոցսում նրանց նախաձեռնողականության դրսևորման տեսանկյունից, համապատասխանաբար այդ դիտարկման ընթացքում ուսուցիչը ուշադրություն է դարձրել հանգամանքների և գործոնների այն ամբողջականությանը, որոնք նպաստել են աշակերտների նախաձեռնողականության մակարդակի բարձրացմանը: Այսինքն, ուսուցիչը դիտարկել է գործոնների ամբողջ համալիրը, որոնք հետազոտական արժեք են ներկայացրել և օգնել են պատասխանել հետազոտության ընթացքում առաջադրված հիմնահարցերին:

Հետազոտության ընթացքում առաջադրվել են հետևյալ կարևոր, առաջնահերթային հարցադրումները, որոնք արտացոլում են առաջադրված խնդիրները.

- Ի՞նչ պայմաններում է դրսևորվում աշակերտների նախաձեռնողականությունը դասի ընթացքում;
- Ո՞ր գործոններն են խթանում աշակերտների նախաձեռնողականությանը և որոնք են դրան խոչընդոտում;
- Ինչպիսի՞ մոտեցում ցուցաբերել աշակերտների հանդեպ դասապրոցեսին՝ նրանց առավելագույնս հետաքրքրելու և նրանց ակտիվությունը խթանելու համար;
- Ինչպե՞ս արդյունավետ կերպով կազմակերպել ուսումնական դասապրոցեսը՝ աշակերտներին հետազոտական աշխատանքների և նախաձեռնողականության դրդելու համար;
- Ինչպե՞ս կնպաստի խմբային աշխատանքի, համագործակցային միջավայրի գործոնների ներմուծումը դասապրոցեսում՝ աշակերտների նախաձեռնողականության մակարդակը և սովորելու ընդունակությունների շեմը բարձրացնելու համար:

Նախագծային մեթոդի կիրառության հիմնական դրսևորումն էր խմբային, համագործակցային աշխատանքների կազմակերպումը դասի ընթացքում: Թեև ուսուցիչները և աշակերտները շարունակում են տարբեր դերակատարում ունենալ, այս մեթոդի աշխատանքների իրականացման համագործակցային բնույթն ապահովվում է նրանով, որ ուսուցչի ղեկավարման դերն աննշան է, նա գործում է գրեթե աննկատ, իսկ համագործակցությունն իրականացվում է միայն համատեղ պլանավորման, գործողությունների և գնահատման միջոցով:

*Նախագծի աշխատանքային գործընթացն էր՝*

ա) թեմաներ ընտրելը և դրանք քննարկելը,

բ) ենթաթեմաներ ընտրելը և հանձնարարելը (կազմակերպվում է ուսուցչի կողմից կամ ընդհանուր համաձայնությամբ),

ե) խմբերում փոքր թեմաները քննարկելը և ներկայացնելը,

զ) ներկայացումներն ըստ խմբերի պատրաստելը. փոքր թեմաների մասին զեկույցներն «իրար միացնելը»,

է) խմբերի ներկայացումները,

ը) դիտողությունները, գնահատումը.

– *գնահատում խմբերում՝* աշակերտներին հանձնարարված թեմայի մասերը,

– *գնահատումը դասարանում՝* խմբերի ներկայացումների գնահատումը։

Հետազոտական աշխատանքի ընթացքում շեշտադրվել է հենց համագործակցային սկզբունքի ակտիվ կիրառումը դասարանում՝ աշակերտների նախաձեռնողականությունը և ակտիվությունը բարձրացնելու համար: Կարևոր նպատակ էր հասկանալ, թե խմբային աշխատանքը օգնո՞ւմ է աշակերտներին առավել ակտիվ դրսևորել իրենց դասի ժամանակ՝ որևէ թեմայի քննարկման ընթացքում, թե՞, ընդհակառակը, խանգարող գործոն է հանդիսանում:

Հետազոտության շրջանակներում վերլուծել եմ մի քանի իրականացված դասեր, որոնց ժամանակ կիրառվել են նախագծային մեթոդի հիմունքները՝ ընտրելով որևէ հստակ թեմա՝ դրա շուրջ հետազոտական, որոնողական և ստեղծագործական աշխատանքներ իրականացնելու համար: Ընդ որում նախագծային աշխատանքները իրականացվել են խմբային աշխառանքների միջոցով՝ դասարանի աշակերտներին բաժանելով մի քանի խմբերի և դրանցից յուրաքանչյուրին հանձնարարելով որևէ թեմայի խորը ուսումնասիրություն, դրա շուրջ տեղեկատվության հավաքում, քննարկում, վերլուծություն և ներկայացում: Այս աշխատանքի հիմնական նպատակն էր կազմել այնպիսի խմբեր, որոնցում ներգրավված կլինեն տարբեր չափի ակտիվությամբ և նախաձեռնողականությամբ հանդես եկող աշակերտներ, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ հնարավորություն ունենա մասնակցելու նախագծի իրականացմանը և իր դերակատարությունն ունենա այդ գործընթացում:

Փորձնական դասերի ընթացքում ուսուցիչը իր առջև դրել է հետևյալ նպատակները՝

1. Խթանել աշակերտների ակտիվությունը դասին համապատասխան մեթոդների կիրառման միջոցով՝ հարց-պատասխան, դիդակտիկ նյութեր, թեմատիկ քարտեզներ, տեսահոլովակների դիտում և այլն;
2. Նպաստել աշակերտների մոտ հետաքրքրության ձևավորմանը դասին մատուցվող նյութի վերաբերյալ՝ կիրառելով վերը թվարկված միջոցները;

3. Խթանել աշակերտների միջև համագործակցային միջավայրի ձևավորումը և դրա արդյունավետ զարգացումը ողջ դասի ընթացքում;
4. Աշակերտներին սովորեցնել աշխատել խմբերում և նրանց հասցնել այն գաղափարը, որ խմբի բոլոր անդամները պատասխանատվություն են կրում խմբի հաջող գործունեության և բավարար վերջնարդյունքի համար:

Փորձի ընթացքում իրականացված առաջին դասերի ընթացքում աշակերտները ծանոթացել են նոր ուսումնական թեմայի հետ: Ուսումնական նյութի նրկայացման արդյունքում աշակերտները պետք է յուրացնեին նոր բառապաշար, կարողանային խոսել թեմայի մեջ ամփոփված տեղեկատվության շուրջ, ինչպես նաև հաղորդակցվել միմյանց հետ բանավոր խոսքի միջոցով, ընդ որում ուսումնասիրված թեմայի շրջանակներում: Մատուցվող նյութը առավել պարզ և հեշտ յուրացնելու համար աշակերտները օգտվել են այնպիսի դիդակտիկ նյութերից, ինչպիսիք են թեմատիկ քարտեր, պարզ նկարներ և այլն:

Դասերի նպատակն էր, բացի նյութի արդյունավետ ուսուցումը՝ զարգացնել նաև աշակրտների համագործակցային և հաղորդակցական հմտությունները և կարողությունները, սովորեցնել նրանց աշխատել խմբում և այդ միջոցով առավել բարձր արդյունքների հասնել ուսումնական գործընթացում:

Առաջադրված նպատակներին հասնելու համար դասերի ընթացքում դասարանը բաժանվել է մի քանի խմբերի, և նրանցից յուրաքանչյուրին առաջադրվել է ընթերցել նոր նյութը, գրառումներ կատարել դրա շուրջ և բանավոր երկխոսություններ ձևավորել՝ ուսուցչի կողմից առաջադրված հարցադրումների հիման վրա: Խմբային աշխատանքի արդյունքում աշակերտները պետք է զույգերով ներկայացնեին յուրացված նյութը՝ բանավոր երկխոսությունների միջոցով: Ողջ ընթացքում ուսուցիչը վեր է հանել դասանյութի վերաբերյալ ուղղորդիչ հարցադրումներ՝ նպաստելու համար աշակերտների ակտիվացմանը և նախաձեռնողականության խթանմանը: Հատուկ ուշադրություն է դարձվել զգալի պասիվ աշակերտների վրա, և ուսուցիչը փորձել է հատուկ հարցերի և հանձնարարությունների միջոցով առավլագույն կերպով ընդգրկել և ներգրավել նրանց խմբային աշխատանքի մեջ:

Այսպիսի եղանակով կազմակերպված դասերը բավականին ակտիվ և հետաքրքիր են ընթացել: Հատկապես, աշակերտները ակտիվություն ցուցաբերեցին խմբային աշխատանքների շրջանակներում: Յուրաքանչյուր աշակերտ փորձում էի իր ունակությունների սահմաններում մասնակցել դասին, կատարել հանձնարարությունները և դրական արդյունք ապահովել իր խմբի համար:

Միաժամանակ, նկատվեց նաև որոշ աշակերտների հարաբերական պասիվություն, որը պայմանավորված էր աշակերտների անձնային հատկություններով: Ցածր ակտիվություն դրսևորած աշակերտները սեփական նախաձեռնությամբ չէին մասնակցում նյութի ներկայացմանը և քննարկմանը, ուսուցչի հարցերին արձագանքում էին միայն այն ժամանակ, երբ ուսուցիչը անմիջականորեն դիմում էր նրանց: Ներկա էին նաև աշակերտներ, ովքեր բնավ չհետաքրքվեցին դասապրոցեսով և որևէ մասնակցություն չցուցաբերեցին:

Հետագա դասերի ընթացքում շարունակվեցին նմանատիպ աշխատանքները՝ կիրառելով նախագծային մեթեդներով ամրագրված համագործակցության սկզբունքը՝ աշակերտների ակտիվությունը և նախաձեռնողականությունը ապահովելու համար:

Դասերի ընթացքում շարունակվեց կիրառվել խառը խմբերով աշխատելու սկզբունքը: Դասարանը նույնպես բաժանվել էր խառը խմբերի, որոնց մեջ ներգրավված են եղել ինչպես բարձր, այնպես էլ ցածր և միջին առաջադիմությամբ աշակերտներ, ընդ որում բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները գործնական աշխատանքի ընթացքում պետք է օգնեին և ուղղորդեին նաև ցածր և միջին առաջադիմությամբ երեխաներին:

Դասի ընթացքում խմբերը դիտեցին կարճ տեսաֆիլ ուսումնասիրվող թեմայի շուրջ, որից հետո նրանցից յուրաքանչյուրին տրվեց աշխատանքային թերթիկ՝ համապատասխան հանձնարարություններով: Նաև աշակերտներին հանձնարարվել էր կարդալ ներկայացված դասի տեքստի մի հատված և ներկայացնել իրենց նախընտրած տարբերակով: Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է մասնակցեր աշխատանքին և իր բաժինը ներկայացներ խմբային աշխատանքի արդյունքում:

Տեսաֆիլմի դիտումը զգալի բարձր տրամադրություն և աշխուժություն հաղորդեց դասարանում, աշակերտները հետաքրքրությամբ էին դիտում, փորձում

հասկանալ և մտապահել ստացված տեղեկատվությունը, ինչը հետո արտահայտվեց ուսուցչի հետ՝ հարց-պատասխան սկզբունքով կազմակերպված քննարկման արդյունքում:

Խմբային աշխատանքի ընթացքում ևս նկատվեց զգալի ակտիվություն և լարվածության աստիճանաբար պակսում որոշ աշակերտների մոտ: Շատերը առավել ակտիվ և անկաշկանդ էին կարողանում աշխատել խմբի մյուս անդամների հետ՝ հասկանալով և գիտակցելով պատասխանատվության իրենց բաժինը: Մյուսնը ավելի պասիվ էին, սակայն ուսուցչի հորդորով օգնություն էին ստանում խմբի առավել ակտիվ և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներից:

Ընդհանուր առմամբ, խմբերը բավականին լավ հանդես եկան, կարողացան միասնական աշխատանքի արդյունքում արժանանալ ուսուցչի բարձր գնահատականի, սովորեցին օգնել միմյանց և համագործակցել:

Հետազոտական դասերի արդյունքում հաջողվեց հասնել հետազոտության սկզբում առաջադրված նպատակին՝ խթանել աշակերտների նախաձեռնողականության և ակտիվության մակարդակի բարձրացմանը՝ կիրառելով համագործակցության սկզբունքը նախագծային մեթոդի շրջանակներում: Ընդ որում, շեշտադրվում էր համագործակցությունը ինչպես աշակերտների և ուսուցչի, այնպես էլ հենց աշակրտների միջև: Այդ նպատակով դասերի ընթացքում փորձարկվեցին տարբեր համագործակցային և ակտիվություն խթանող եղանակներ, մասնավորապես՝ հարց-պատասխան սկզբունքը, քննարկումներ կազմակերպելու սկզբունքը, տեսաֆիլմեր և թեմատիկ տեսահոլովակներ դիտելու սկզբունքը: Բոլոր կիրառված մեթոդները հնարավորություն տվեցին արդյունավետ կերպով ազդել աշակերտների նախաձեռնողականության վրա, ակտիվություն հաղորդեցին աշակերտների ուսումնական գործունեությանը:

## Եզրակացություն

Այսպիսով, աշակերտների՝ դասապրոցեսում նախաձեռնողականություն ցուցաբերելու խնդիրը կարևոր գործոն է ուսումնական գործընթացի արդյունավետությունը և նպատակաուղղվածությունը ապահովելու համար: Եվ այս պարագայում շատ կարևոր գործոն է հանդիսանում ոչ միայն աշակերտների անձնային հատկությունները և որակները, որքան հենց ուսուցչի նպատակաուղղված գործունեությունը, հատուկ մանկավարժական նախագծայի մեթոդների կիրառությունը, որոնք արդյունավետ կերպով կարող են խթանել դասարանում աշակերտների ակտիվությունը դասերի ժամանակ, էլ ավելի ամրապնդել ակտիվ աշակերտների առաջընթաց ուսումը, ինչպես նաև հիմքեր ապահովել թույլ և մոտիվացիայի պակաս ունեցող աշակերտների ուսումնական գործունեությունը:

Տվյալ հետազոտության ընթացքում փորձարկվեց խմբային աշխատանքի կիրառման սկզբունքը՝ համագործակցային մեթոդի հիման վրա նախագծային ուսուցման շրջանակներում, որը ենթադրում էր ակտիվ հաղորդակցություն ինչպես աշակերտ-ուսուցիչ ուղղությամբ, այնպես էլ աշակրտ-աշակերտ հարթակում որևէ հետազոտվող և քննարկվող ուսումնական թեմայի շուրջ:

Ինձ հաջողվեց զգալի դրական արդյունքների հասնել աշակերտների ակտիվության և նախաձեռնողականության խթանման գործում՝ կիրառելով թեմատիկ պաստառներ և քարտային նյութեր, աշակրտներին տեսաֆիլմեր և թեմատիկ տեսահոլովակներ ցուցադրելով հանձնարարված թեմայի շուրջ: Այսպիսի միջոցների կիրառումը՝ ակտիվ և հետաքրքրաշարժ քննարկումների, առաջադրանքների և հանձնարարությունների ուղղորդմամբ, նպաստեցին դասարանի աշակերտների ակտիվության խթանմանը: Նրանք առավել մեծ ուշադրությամնբ և հետաքրքրությամբ էին հետևում դասի ընթացքին, ձեռք էին բերում նոր գիտելիքներ և առաջարկված հանձնարարությունների շնորհիվ կարողանում էին մտապահել և ամրապնդել ստացված գիտելիքները:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Գալոյան Ս., Նոր դիդակտիկայի տեսական հիմքերը: - Երևան, Մանկավարժություն, 2012
2. Սամվելյան Կ., Նախագծային մեթոդը՝ սովորողների ակտիվ մասնակցություն պահանջող ուսումնական մեթոդ: - Երևան, Մանկավարժություն, 2013
3. Ուսուցման որակի բարելավմանն ուղղված մասնագիտական զարգացման գործիք տարրական դասարանների մասնագետների համար: Ձեռնարկ ուսուցիչների համար: - Երևան, 2014
4. Попов В.А. История педагогики и образования. - М.: Академия, 2010